ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԴԵՐԸ ԵՎ ԿԱՊԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ՌԱԶՄԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հասարակական սպառման ֆոնդերին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններում նշվում են, որ դրանք նախատեսված են ընտանիքների կենսամակարդակները մերձեցնելու, աճող սերնդի կոմունիստական դաստիարակության, աշխատուժի վերարտադրությունն ապահովելու և այլ նպատակներով։ Ե. Բորիսովը, օրինակ, գրում է, որ այդ ֆոնդերի հաշվին մեր երկրում լուծվեցին այնպիսի խոշոր սոցիալ-տնտեսական խնդիրներ, ինչպիսիք են սոցիալական ապահովությունն ու սոցիալական ապահովագրությունը, բնակչության կրթումն ու դաստիարակումը, հանգստի ու բժշկական օգնության կազմակերպումը, բնակարանային հարցը և այլն, որոնք շոշափում են աշխատողների կենսական շահերը և հասարակության բոլոր անդամների համար ապահովում կյանքի բարենպաստ պայմաններ[1]։ Այդ տեսակետին են նաև բազմաթիվ այլ ուսումնասիրողներ[2]։

Հասարակական սպառման ֆոնդերի ֆունկցիոնալ դերի սոցիալ-տնտեսական բովանդակության տեսակետից կատարված մեկնաբանություններում այդ ֆոնդերը գերազանցապես դիտվում են որպես անհրաժեշտ արդյունքի բաղադրամաս և կատարում են այդ կատեգորիային համապատասխան երեք հիմնական խնդիրներ։ Այսպես, օրինակ, Գ. Ղարիբյանի և Լ. Հակոբյանի կարծիքով «անհրաժեշտ արդյունքը կատարում է երեք հիմնական խնդիրներ՝ ապահովելու, առաջին՝ աշխատուժի վերարտադրությունը, երկրորդ՝ արտադրողի համակողմանի ու ազատ զարգացումը և երրորդ՝ աշխատանքի արդյունքի մեջ արտադրողի տնտեսական խթանումը։ Սպառման հասարակական ֆոնդերը որպես անհրաժեշտ արդյունքի բաղադրամաս իրենց հիմնական մասով վերջին հաշվով նույնպես կատարում են նշված երեք խնդիրները»[3]։

Մեթոդոլոգիական նույն սկզբունքից ելնելով՝ Ն. Տիխոնովը գրում է, որ հասարակական սպառման ֆոնդերը որպես անհրաժեշտ արդյունքի բաղադրա-

---

[1] Е. Ф. Борисов, Единство экономических интересов общества, предприятий и трудящихся, М., 1970, *էջ 98։*

[2] С. П. Фигурнов, Строительство коммунизма и рост благосостояния народа, М., 1962; его же, Реальная заработная плата и подъем материального благосостояния трудящихся в СССР, М., 1960; В. А. Ачаркан, В. Г. Кряжев, Общественные фонды потребления в СССР, М., 1972; М. Г. Колодный, А. П. Степанов, Планирование народного хозяйства СССР, Киев, 1963; Я. Коротков, Н. Московцев, Общественные фонды потребления и их роль в период перехода к коммунизму, Калинин, 1962, *և ուրիշներ։*

[3] *Գ. Ղարիբյան, Լ. Հակոբյան, Սպառման հասարակական ֆոնդերի աճը և կառուցվածքը ՀՍՍՀ-ում («Բանբեր Երևանի համալսարանի», 1972, № 3, էջ 165)։*

մաս «կատարում են իրենց ներհատուկ ֆունկցիաներ։ ... Ապահովում են բոլորի համար հավասար պայմանների որոշակի շրջան՝ նյութական և հոգևոր պահանջմունքներ բավարարելու համար։ Ապա, բավարարելով հասարակության անաշխատունակ անդամների պահանջմունքները, նրանք նպաստում են ընտանիքների, նրանցում տարբեր չափով աշխատավարձ և տարբեր թվով խնամառուներ լինելու դեպքերում, կենսամակարդակների համահարթմանը»[4]։

Գ. Մարգսյանը գտնում է, որ այդ ֆոնդերի ֆունկցիոնալ դերը տարբեր որակավորում ունեցող աշխատողների ընտանիքների կենսամակարդակների համահարթումն է և այլն[5]։

Վերոհիշյալ տեսակետներին հակառակ Ռ. Հաբիբին զուտ բաշխման դիրքից քննելով նշված ֆոնդերի ֆունկցիոնալ դերը, գրում է. «Հասարակական սպառման ֆոնդերի տնտեսական ֆունկցիան այն է, որ աշխատանքի վճարման հետ զուգակցված բաշխման մեջ իրացնի արտադրության միջոցների նկատմամբ աշխատավորների սոցիալիստական հավասարությունը, երաշխավորելով հասարակական աշխատանքին մասնակցելու վրա հիմնված սոցիալիստական հասարակության բոլոր անդամների հավասար իրավունքը նրանց ընդունակությունների համակողմանի զարգացման պայմանների հավասարեցման, ծերության և անաշխատունակության դեպքում ապահովության ու մի շարք առավել կարևոր պահանջմունքների բավարարման մեջ»[6]։ Նա նաև նշում է, որ այդ ֆոնդերը նպաստում են «սոցիալիստական բաշխման հարաբերությունները կոմունիստականի վերաճելուն»[7]։

Բ. Ռակիտսկին, Ի. Օբլոմսկայան հասարակական սպառման ֆոնդերի ֆունկցիոնալ դերում առանձնացնելով հիմնականը[8], միաժամանակ նշում են. որ նրանց «ներհատուկ են այլ ֆունկցիաներ։ Դրանցից մեկն այն է, որ հասարակական սպառման ֆոնդերը որպես բաշխման ձև նպաստում են առավել ձեռնտու առաջադիմական, ռացիոնալ սպառման հասարակական ձևի զարգացմանը»[9]։

Անդրադառնալով այդ հարցին, Վ. Աչարկանը, Վ. Կրյաժևը և ուրիշներ գտնում են, որ մյուս բոլոր խնդիրների լուծման հետ միասին հասարակական սպառման ֆոնդերը կարևոր դեր են կատարում նաև սոցիալիստական վերարտադրության ամբողջական պրոցեսի մասը կազմող բաշխման ու կոմունիս-

---

[4] Н. М. Тихонов, Необходимый продукт в условиях развитого социализма, Л., 1974. էջ 182։

[5] Г. С. Саркисян, Уровень, темпы и пропорции роста реальных доходов при социализме. М., 1972, էջ 28—29։

[6] Р. Хабиби, Об экономических функциях общественных фондов потребления («Экономические науки», 1975, № 5, էջ 31)։

[7] Նույն տեղում։

[8] Օրինակ, Բ. Ռակիտսկին գրում է. «Սոցիալիզմի օրոք հասարակական սպառման ֆոնդերի հիմնական ֆունկցիան բաշխման պրոցեսում տնտեսական այնպիսի պայմանների ապահովումն է, որոնք բավարար են հասարակության բոլոր անդամների բազմակողմանի ընդունակությունների զարգացման ընթացքում սոցիալ-տնտեսական մակարդակների աստիճանական, բայց հնարավորին չափ ավելի արագ վերացման համար» (Б. В. Ракитский, Общественные фонды потребления как экономическая категория, М., 1966, էջ 21)։ Այդ ֆոնդերի ֆունկցիոնալ դերի մասին գրեթե նույն կարծիքին է նաև Ի. Օբլոմսկայան (И. Я. Обломская, Система личных потреблений в СССР, М., 1972, էջ 167—168)։

[9] Б. В. Ракитский, նշվ. աշխ., էջ 21—22։

տական հասարակական հարաբերությունների զարգացման գործում[10], նպաստում նյութական բարիքների բաշխման ու սպասարկման ասպարեզում կոմունիստական սկզբունքների իրականացմանը[11]։ Այսինքն, վերոհիշյալ հետազոտողներն այդ ֆոնդերի ֆունկցիոնալ դերը չեն սահմանափակում զուտ սուբյեկտով։ Նրանց մոտ այն ընդգրկում է նաև սոցիալիստական հասարակության արտադրական հարաբերությունները։

Հետագայում անդրադառնալով այդ ֆոնդերի միջոցով լուծվող սոցիալ-տնտեսական խնդիրներին, Ն. Բուզյյակովը նշում է, որ «հասարակական սպառման ֆոնդերն օգտագործվում են կարևոր տնտեսական-քաղաքական խնդիրների լուծման՝ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման... համար»[12]։

Մեր համոզմամբ, բերված բոլոր տեսակետները ճիշտ արտահայտելով հասարակական սպառման ֆոնդերի օգնությամբ լուծվող տնտեսական խնդիրներ, այնուամենայնիվ լրիվ ու ամբողջական չեն, եթե դրանք դիտենք Վ. Ի. Լենինի այն ցուցումի տեսակետից, որ «մարքսիզմի ամբողջ ոգին, նրա ամբողջ սիստեմը պահանջում է, որ յուրաքանչյուր դրույթ դիտվի միայն (α) պատմականորեն. (β) միայն մյուսների կապակցությամբ. (γ) միայն պատմության կոնկրետ փորձի կապակցությամբ»[13]։ Այսպես, եթե նկատի առնենք, որ «կոմունիզմի նյութատեխնիկական բազան,— ինչպես գրում է Ա. Առաքելյանը,— դա համաժողովրդական սեփականության վրա հիմնված ավտոմատացված արտադրությունն է, որը պլանաչափորեն կառավարվում է շահագործումից ազատ, բարձր որակավորում ունեցող աշխատողների կողմից, որոնց մոտ ֆիզիկական ու մտավոր աշխատանքը զուգակցված է (միաձուլված է մի ամբողջության մեջ), իսկ աշխատանքի արտադրողականությունը բարձրանում է կապիտալիզմի համար անհասանելի աստիճանի»[14], ապա կարելի է եզրակացնել, որ այդ ֆոնդերը նպաստում են սոցիալիստական արտադրության զարգացմանը, հասարակական ամբողջական արդյունքի և նրա բաղադրամասը կազմող ազգային եկամտի արտադրության ավելացմանը։

Սոցիալիստական արտադրության բնույթով պայմանավորված՝ սպառման ամբողջ ֆոնդը և նրա բաղադրամասը կազմող հասարակական սպառման ֆոնդերի ֆունկցիոնալ դերն ամենից առաջ հանգում է աշխատուժի (բնակչության) վերարտադրության ապահովմանը։ Կ. Մարքսի խոսքերով ասած՝ «սպառումն... հնարավոր է դարձնում արտադրությունը, որովհետև նա է ստեղծում արդյունքների համար սուբյեկտ, որի համար էլ նրանք արդյունք են համարվում»[15]։

---

10 Н. И. Бузляков, Общественные фонды потребления, М., 1964, էջ 6։

11 В. А. Ачаркан, В. Г. Кряжев, նշվ. աշխ., էջ 10։

12 Н. И. Бузляков, Главная задача новой пятилетки, М., 1971, էջ 97։ Նույն տեսակետին է նաև Ա. Չուխնոն (А. А. Чухно, Распределение предметов потребления в социалистическом обществе, М., 1967, էջ 79)։

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 265։

14 Ա. Ա. Առաքելյան, Սոցիալիստական վերարտադրությունը և գիտատեխնիկական առաջընթացը («Սոցիալիստական վերարտադրության լենինյան ուսմունքը», Երևան, 1970, էջ 388)։

15 Կ. Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, Երևան, 1948, էջ 242։

Սակայն, եթե նկատի առնենք, որ աշխատուժի վերարտադրության պրոցեսը աշխատողի ծախսած էներգիայի փոխհատուցումը, աշխատողների թվի աճը, նրանց ձիրքերի ու ընդունակությունների բացահայտումն ու զարգացումը[16] չէ միայն, այլ՝ նաև արտադրական կարողությունների ու էներգիայի սպառման պրոցես[17], ապա պարզ կդառնա, որ հասարակական սպառման ֆոնդերն աշխատուժի միջոցով հանդես են գալիս որպես վերարտադրության միջոց և դրանց ֆունկցիոնալ դերը հանգում է արտադրության զարգացմանը, հասարակական ամբողջական արդյունքի, նրա բաղադրամասը կազմող ազգային եկամտի արտադրության ավելացմանը։ Վերը ասվածը համոզիչ կերպով հաստատվում է, օրինակ, հասարակական սպառման ֆոնդերի հիմնական մասը կազմող և իր սոցիալ-տնտեսական բովանդակությամբ անհրաժեշտ արդյունք համարվող ուսուցման ծախսերի քննությամբ։

Այսպես, 1959—1975 թթ. ուսուցման ծախսերը նպաստելով կրթության ոլորտի զարգացմանն ու ընդարձակմանը, ամենից առաջ հնարավորություն են տվել ավելացնելու բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների թիվը մեր հանրապետության բնակչության կազմում։ Եթե 1959 թ. ՀՍՍՀ-ում 10 և բարձր տարիքի յուրաքանչյուր 1000 բնակչից 445-ը բարձրագույն և միջնակարգ (լրիվ և ոչ լրիվ) կրթություն ուներ, ապա 1975 թ.՝ 574-ը[18] (ամբողջ Միությունում այդ ցուցանիշը նշված տարիներին համապատասխանաբար կազմել է 361 և 570)[19]։ Դրա հետևանքով, եթե 1960 թ. ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում ընդգրկված էր բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող 75,2 հազար մարդ, ապա 1976 թ.՝ ավելի քան երեք անգամ ավելի՝ 228 հազար[20]։ Նկատենք, որ ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում զբաղված աշխատողների ընդհանուր թվի մեջ բարձր որակավորում ունեցող աշխատողների տեսակարար կշիռը համեմատաբար ավելի բարձր է, քան ամբողջ երկրում։ Այդ մասին է վկայում ստորև բերված № 1 աղյուսակը։

Աղյուսակը միաժամանակ ցույց է տալիս, որ ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ ՀՍՍՀ-ում 1959—1975 թթ. ուսուցման ծախսերը նպաստել են ժողովրդական տնտեսության մեջ իջեցնելու ցածր և ավելացնելու բարձր որակավորում ունեցող աշխատողների տեսակարար կշիռը։

1959—1975 թթ. ՀՍՍՀ նյութական և ոչ նյութական արտադրության տարբեր ճյուղերում զբաղված աշխատողների ընդհանուր թվի մեջ բարձրագույն, միջնակարգ մասնագիտական և ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների տեսակարար կշիռը համապատասխանաբար ավելացել է 2,43, 1,74 և շուրջ 2,6 անգամ։ Դրան զուգընթաց պակասել է ոչ լրիվ միջնակարգ և յոթնամյակից ցածր ու տարրական կրթություն ունեցող աշխատողների տեսա-

---

16 Д. И. Валентен, Н. В. Ягодкин, Воспроизводство рабочей силы при социализме, М., 1967, էջ 32—33։

17 Վ. Ե. Խոչարեկյան, Աշխատուժի վերարտադրությունը («Սոցիալիստական վերարտադրության լենինյան ուսմունքը», էջ 216)։

18 «Народное хозяйство СССР в 1975 г.», М., 1976, էջ 39։

19 Նույն տեղում, էջ 38։

20 «Народное хозяйство Армянской ССР», Ереван, 1977, էջ 134։

Աղյուսակ № 1

ՍՍՀՄ և ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում զբաղված աշխատողների կրթական մակարդակը 1959, 1970, 1975 թթ.[21] (տոկոսներով)։

Ցուցանիշներ	1959 թ.		1970 թ.		1975 թ.	
	ՍՍՀՄ	ՀՍՍՀ	ՍՍՀՄ	ՀՍՍՀ	ՍՍՀՄ	ՀՍՍՀ*
Բարձրագույն ավարտածներ	3,3	5.6	6,5	10.0	8,4	13,6
Թարձրագույն չավարտածներ	1,2	1,4	1,3	2,2	1,8	1,5
Միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներ	5,8	5,5	10,5	8,1	11.3	9,6
Ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողներ	7,2	12,4	15,9	25,3	20,3	31,9
Ոչ լրիվ միջնակարգ կրթություն ունեցողներ	25,8	27,4	31,1	24,1	33,4	22.0
Յոթնամյա և տարրական կրթություն ունեցողներ	56,7	47,7	34,7	30,3	24,8	20.4
Ընդամենը . . .	100	100	100	100	100	100

կարար կշիռը (ոչ լրիվ միջնակարգ կրթություն ունեցողներինը 1959 թ. 25,8%-ից իջել և 1975 թ. կազմել է 22,9%, իսկ յոթնամյակից ցածր ու տարրական կրթություն ունեցողներինը՝ 56,7-ից հասել է 20,4%-ի։

Հայտնի է, որ աշխատողների կրթական (որակավորման) մակարդակի բարձրացումն ապահովում է նրանց տեսական ու գործնական գիտելիքների և արտադրության մեջ փաստորեն ներդրված միջոցների օգտագործման միջև եղած իրական համապատասխանությունը։ Դրա հետ մեկտեղ բարձր որակավորում ունեցող աշխատավորներն ավելի ռացիոնալ կերպով են օգտագործում աշխատանքի միջոցները։ Նրանց աշխատանքը ժամանակի միավորի ընթացքում ավելի շատ արդյունք է ստեղծում և ավելի մեծ չափով նպաստում հասարակական ամբողջական արդյունքի արտադրման ավելացմանը։ Կ. Մարքսի բնորոշմամբ «բարդ աշխատանքը լոկ աստիճանի բարձրացրած կամ ավելի շուտ՝ բազմապատկած պարզ աշխատանք է, այնպես որ բարդ աշխատանքի մի որոշ քանակ հավասար է պարզ աշխատանքի մի ավելի մեծ քանակի»[22]։ Մյուս կողմից, «այն աշխատանքը, որը... ավելի բարդ աշխա-

---

21 Աղյուսակը կազմվել է հետևյալ ժողովածուների տվյալների հիման վրա. «Итоги Всесоюзной переписи населения 1959 г.» (Армянская ССР), М., 1963, էջ 39, 47, 48; «Итоги Всесоюзной переписи населения 1970 г.», М., 1973, т. 5, էջ 278, «Народное хозяйство Армянской ССР в 1975 г.», Ереван, 1976, էջ 6, 9, 171, 172, 174; «Народное хозяйство Армянской ССР», էջ 10, 130—131։ Օգտագործել ենք նաև հետևյալ աշխատությունները. В. Комаров, Экономическая эффективность образования («Вопросы экономики», 1977, № 9, էջ 58)։ Վ. Ե. Խոջաբեկյան, Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի պրոբլեմները, Երևան, 1976, էջ 111—132։

* Հաշվարկը կատարված է ժողովրդական տնտեսության մեջ փաստացի զբաղված աշխատողների թվին համապատասխան («Народное хозяйство Армянской ССР в 1975 г.», էջ 173)։

22 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 51։

տանքի նշանակություն ունի, այնպիսի աշխատուժի արտահայտություն է, որի գոյացումը ավելի բարձր ծախքեր է պահանջում, որի արտադրությունը ավելի շատ աշխատաժամանակ է նստում և որը այդ պատճառով ավելի բարձր արժեք ունի, քան հասարակ (որակավորում չունեցող—Ռ. Գ.) աշխատուժը։ Եթե այդ ուժի արժեքն ավելի բարձր է, ապա նա դրսևորվում է նաև ավելի բարձր աշխատանքի մեջ, ուստի և հավասար ժամանակամիջոցում առարկայանում է համեմատաբար ավելի բարձր արժեքի մեջ»[23]։

Ս. Սարումիլինի հաշվարկներով, նույնիսկ 7-ամյա կրթություն ունեցող բանվորի աշխատանքի արտադրողականությունը միևնույն պայմաններում 67%-ով բարձր է կրթություն չունեցողի համեմատությամբ[24]։ Աշխատողների կրթական ու կուլտուրական մակարդակի բարձրացմամբ պայմանավորված հասարակական ամբողջական արդյունքի, ազգային եկամտի ավելացման հարցերը Ս. Ստրումիլինից հետո սկսեցին մանրամասն ուսումնասիրել բազմաթիվ այլ տնտեսագետներ։ Նրանք գտնում են, որ կրթությամբ պայմանավորված ազգային եկամտի արտադրության չափերի ավելացումը (կամ կրթության տնտեսական արդյունավետությունը) որոշելու համար հարկավոր է որակավորված աշխատողների աշխատանքը վերածել չորակավորված աշխատանքի[25]։

Վերոհիշյալ տնտեսագետների առաջադրված մեթոդով որակյալ աշխատանքը ոչ որակյալի վերածելու նպատակով մեր կատարած հաշվարկները ցույց են տալիս, որ ՀՍՍՀ նյութական արտադրության տարբեր ճյուղերում որակավորված աշխատանքը ոչ որակյալի վերածելու համար պետք է օգտագործել հետևյալ գործակիցները. 1960 թ. համար՝ 1,29, 1970-ի համար՝ 1,44, իսկ 1975 թ. համար՝ 1,54։ Այստեղից հետևում է, որ նյութական արտադրության ոլորտում դրաղված աշխատողների ընդհանուր քանակը չորակավորվածի վերածելու համար պետք է համապատասխան տարիների ընթացքում աշխատած բանվոր-ծառայողների քանակը բազմապատկել համապատասխանաբար 29, 44, 54%-ով։

---

23 Նույն տեղում, էջ 208։

24 С. Г. Струмилин, Эффективность образования в СССР («Экономическая газета», 2. IV. 1962).

25 В. А. Жамин, Г. А. Егиазарян, Эффективность квалифицированного труда, М., 1968; В. А. Жамин, Экономика образования, М., 1969; В. А. Жамин, С. А. Костанян, Экономика и образование, М., 1970; В. Е. Комаров, Экономические проблемы подготовки и использование кадров специалистов, М., 1972; его же, Экономическая эффективность образования («Вопросы экономики», 1977, № 9); Л. И. Тульчинский, Финансовые проблемы профессионального образования в СССР, М., 1968; Б. М. Ременников, Экономические проблемы высшего образования в СССР, М., 1968; Е. Воронина, Эффективность общественных затрат на образование («Вопросы экономики», 1973, № 11).

Աղյուսակ № 2

ՀՍՍՀ ազգային եկամտի աճի հիմնական ցուցանիշները 1960—1975 թթ.[26]

Ցուցանիշներ	1960 թ.	1975 թ.	1975 թ. փոփոխությունը 1960 թ. նկատմամբ, տոկոսներով
Ընդամենը աշխատողներ նյութական արտադրության ոլորտում (հազար մարդ)*			
Նրանց բացարձակ թիվը	486,9	708	145,4
Աշխատողների կրթության և որակավորման բարձրացման հետ կապված նրանց բացարձակ թվին կատարվող ավելացումը** . . .	141,1	382,3	276,8
Ընդամենը ավելացումների հետ մեկտեղ . . .	628,0	1090,3	173,6
Ընդհանուր թվին կատարված ավելացումները %-ներով	22,4	35,6	158,9
Ազգային եկամտի արտադրությունը համադրելի 1965 թ. գներով (մլն. ռուբլի)	987	3367,9	341,1
Այդ թվում աշխատողների կրթության և որակավորման հաշվին	221	1199	542,5
Աշխատանքի արտադրողականությունը (նյութական արտադրության ոլորտում զբաղված մեկ աշխատողի արտադրած ազգային եկամուտը ռուբլիներով)	2028	4757	234,5

Մեր հաշվարկները ցույց են տալիս, որ եթե 1960 թ. ՀՍՍՀ նյութական արտադրության տարբեր ճյուղերում աշխատողների թվի մեջ որակյալ աշխատողների տոկոսը կազմել է 22,4[27], ապա 1975 թ.՝ 35,6[28] (ամբողջ երկրում այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 19,3 և 30%)[29].

Նյութական արտադրության ոլորտում որակավորված աշխատողների ավելացումը, ինչպես վերն ասվեց, նպաստում է ազգային եկամտի ծավալի ավելացմանը։ Հայտնի է, որ սոցիալիզմի օրոք ազգային եկամուտն ավելանում է արտադրությունում զբաղված աշխատողների թվի աճման և աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին։ Իսկ աշխատանքի ար-

---

26 Աղյուսակը կազմվել է հետևյալ ժողովածուների տվյալների հիման վրա. «Показатели баланса народного хозяйства Армянской ССР за годы девятой пятилетки», Ереван, 1977, էջ 33, «Народное хозяйство Армянской ССР в 1975 г.», էջ 22, «Труд в Армянской ССР», Ереван, 1977, էջ 7, 19։

* Առանց օժանդակ գյուղացիական տնտեսության մեջ զբաղվածների։

** Կրթության և որակավորման բարձրացման հաշվին աշխատողների բացարձակ թվին ավելացումները կատարվել են համապատասխան տարիների ռեդուկցիայի գործակիցներ կիրառելու միջոցով՝ 486,9×0,29=141,1 և 708,0×0,54=382,3։

27 1960 թ. կրթության և որակավորման բարձրացման հաշվին աշխատողների բացարձակ թվին (486,9 հազար մարդ) կատարած ավելացումը՝ 141,1 հազար մարդ, բազմապատկել ենք 100-ով և բաժանել աշխատողների ընդհանուր թվի՝ 628 հազար մարդ, վրա (տե՛ս աղյուսակ № 2)։

28 1975 թ. տոկոսաչափը որոշվել է նույն տարվա վերը նշված համապատասխան ցուցանիշների հիման վրա $\left(\frac{382,3 \text{ հազ. մարդ} \times 100}{1090,3}\right)$։

29 «Вопросы экономики», 1977, № 9, էջ 62։

տադրողականության բարձրացմանը, բացի որակավորված աշխատողների թվի ավելացումից, մեծապես նպաստում է արտադրության մեջ կատարելագործված մեքենաների կիրառումը։ Սակայն մեզ, տվյալ դեպքում, հետաքրքրում է միայն կրթության ոլորտի գործունեությամբ պայմանավորված աղդային եկամտի ծավալի ավելացումը։ Այդ պատճառով էլ նպատակահարմար ենք գտնում վերջինս պարզելու համար օգտվել վերը նշված տնտեսագետների և մասնավորապես Վ. Կոմարովի կողմից առաջադրվող հաշվարկման մեթոդից[30]։

Աշխատողների կրթության և որակավորման բարձրացման, ինչպես նաև աշխատանքի տեխնիկական զինվածության բարձրացման հաշվին 1961—1975 թթ. ՀՍՍՀ ազգային եկամտի աճման մասին պարզ պատկերացում է տալիս № 3 աղյուսակը։

Աղյուսակ № 3

ՀՍՍՀ ազգային եկամտի աճն ըստ առանձին գործոնների 1961—1975 թթ.[31]։

Ցուցանիշներ	Աճը	
	Մլիոն ռուբլիներով	Տոկոսներով՝ ամբողջ աճի նկատմամբ
Ընդամենը աղդային եկամտի աճը (3367,9 մլն. ռուբլի—987,0 մլն. ռուբլի)	2380,9	100
Այդ թվում՝		
Աշխատողների թվի ավելացման հաշվին (708,0 հազ. մարդ—486,9 հազ. մարդ). 2028 ռուբլի	448,3	18,8
Աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին (2380,9 մլն. ռուբլի—448,3 մլն. ռուբլի)	1932,6	81,2
Որից՝		
Աշխատողների կրթության և որակավորման բարձրացման հաշվին (1199,0 մլն. ռուբլի—221,0 մլն. ռուբլի)	978,0	41,1
Աշխատանքի տեխնիկական զինվածության բարձրացման հաշվին (1932,6 մլն. ռուբլի—978,0 մլն. ռուբլի)	954,6	40,1

Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ 1975 թ. ՀՍՍՀ-ում արտադրված ազգային եկամուտը կազմել է 3367,9 մլն. ռուբլի կամ 1960 թ. ցուցանիշը գերազանցել է 2380,9 մլն. ռուբլով։ Ազգային եկամտի աճի (2380,9 մլն. ռուբլու) 81,2%-ը կամ 1932,6 մլն. ռուբլին արդյունք է աշխատանքի արտադրողականության բարձրացման։ Դրա 41,1%-ը կամ 978,0 մլն. ռուբլին ապահովվել է աշխատողների կրթության և որակավորման բարձրացման հաշվին։

Հասկանալի է, եթե չլինեին ուսուցման ծախսերը և դրանց հաշվին գործող ոլորտը, ապա հնարավոր չէր լինի բարձրացնել նյութական արտադրության մեջ զբաղված աշխատողների կրթական ու կուլտուրական մակարդակը և ապահովել 978 մլն. ռուբլու լրացուցիչ ազգային եկամտի արտադրություն։

30 Նույն տեղում, էջ 55—65։

31 Կազմվել է № 2 աղյուսակի տվյալների հիման վրա։

Որակավորում ունեցող մասնագետների թանակի ավելացումն ու նրանց կրթական մակարդակի բարձրացումը 1961—1975 թթ. ուղեկցվեց նաև արտադրության իրային տարրերի զարգացմամբ ու կատարելագործմամբ, տեխնիկական առաջադիմության արագացմամբ։ Վերջինիս հաջող իրականացումը պահանջում է անհրաժեշտ ուղղություն ցույց տալ ինչպես բանվորների, տեխնիկների, ինժեներների, նախագծողների, կոնստրուկտորների, գիտահետազոտական կազմակերպությունների[32], այնպես էլ կրթության ոլորտի գործունեությանը։

Արտադրության զարգացումը և տեխնիկական առաջադիմությունն ապահովող ուսուցման ոլորտի գործունեությունը, նպաստելով աշխատավորների որակավորման բարձրացմանը, օժանդակում են նաև արտադրության միջոցների հետագա զարգացմանը[33]։ Արտադրողական ուժերը չեն կարող զարգանալ միայն արտադրության իրային տարրերի հաշվին։ Վերջիններիս կատարելագործումը թելադրում է զարգացնել այդ միջոցները շարժման մեջ դնող մարդկանց ունակությունները։ Ֆ. Էնգելսի խոսքերով ասած՝ «պետք է համապատասխան չափով զարգացնել նաև այդ միջոցները շարժման մեջ դնող մարդկանց ունակությունները»[34], որոնք պայմանավորում են նոր կատարելագործված մեքենաների ու սարքավորումների ստեղծումը։ «Բնակչության կուլտուրական աճումից... են կախված արտադրողական ուժերի վերելքը, տեխնիկայի առաջադիմությունը»[35]։

Այսպիսով, ուսուցման ոլորտը ծառայելով աշխատուժի (բնակչության) կրթական, կուլտուրական մակարդակի բարձրացմանը, միաժամանակ նպաստում է նոր տեսակի մեքենաների ու սարքավորումների ստեղծմանը։ Կրթության ոլորտի գործունեությունն իրականացվում է այդ նպատակների համար կատարվող ծախսերի հաշվին, ծախսեր, որոնք նպաստում են աշխատուժի վերարտադրությանը։ Այստեղից հետևում է, որ կրթության ոլորտի գործունեությունն ապահովող հասարակական սպառման ֆոնդերի (որպես անհրաժեշտ արդյունքի բաղադրամասի) ֆունկցիոնալ դերը հանգում է աշխատուժի, հասարակական ամբողջական արդյունքի, նրա բաղադրամասը կազմող ազգային եկամտի վերարտադրությանը, ինչպես նաև արտադրության միջոցների զարգացմանն ու կատարելագործմանը։

Իսկ այն ճշմարտությունը, թե աշխատուժի գործունեության մեջ արտահայտվում է հասարակական սպառման ֆոնդերի անհրաժեշտ արդյունքի բաղադրամասի ֆունկցիոնալ դերը, հաստատում է արտադրության կապիտալիստական եղանակի պայմաններում արժեքի ստեղծման մասին Կ. Մարքսի հետևյալ դրույթը. «Պատկերելով այն տարբեր դերերը, որ խաղում են աշխատանքի պրոցեսի գործոնները (արտադրության գործիքներն ու աշխատու-

---

32 Մ. Խ. Քոթանյան, Գիտատեխնիկական առաջադիմությունը և նրա խթանումը, Երևան, 1969, էջ 86։

33 ՍՍՀՄ և ՀՍՍՀ գիտատեխնիկական առաջընթացի ու արտադրության միջոցների զարգացման մասին տե՛ս А. А. Аракелян, Научно-технический прогресс в СССР, Ереван, 1978; М. Х. Котанян. Экономическое стимулирование научно-технического прогресса. Ереван, 1975; Նույնի, X հնգամյակը խոշոր քայլ է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում, Երևան, 1977։

34 Ֆ. Էնգելս, Կոմունիզմի սկզբունքները, Երևան, 1959, էջ 33։

35 «ՍՄԿԿ ծրագիրը և կանոնադրությունը», Երևան, 1964, էջ 158։

ժր—Ռ. Դ.) արդյունքի արժեքի գոյացման մեջ, մենք հենց դրանով էլ բնորոշում էինք կապիտալի բաղկացուցիչ մասերի (հաստատուն և փոփոխուն կապիտալների—Ռ. Դ.) ֆունկցիաները արժեքի աճման նրան հատուկ պրոցեսում»[36]։

Կ. Մարքսի այս դրույթը հիմք է տալիս ասելու, որ (ինչպես մեր օրինակում ուսուցման ծախսերը) ընդհանրապես սպառման ֆոնդը կազմող և իր սոցիալ-տնտեսական բովանդակությամբ անհրաժեշտ արդյունք համարվող սպառման ծախսերի ֆունկցիոնալ դերը կարելի է տեսնել աշխատուժի միջոցով լուծվող բազմաթիվ տնտեսական խնդիրների մեջ։

Իրականում, ինչպես բոլոր հասարակական ֆորմացիաներում, այնպես էլ արտադրության սոցիալիստական եղանակի պայմաններում աշխատուժը շարժման մեջ է դնում արտադրության միջոցները, մշակում աշխատանքի առարկաները, նոր ստեղծված արժեքին է փոխանցում արտադրության մաշվող միջոցների և աշխատանքի առարկաների արժեքը, ստեղծում հասարակական ամբողջական արդյունքը և նրա բաղադրամասը կազմող ազգային եկամուտը։ Այսինքն, արտադրության միջոցների սոցիալիստական հանրային սեփականությունը, հաղթահարելով աշխատուժի ապրանքային բնույթը, չի վերացնում բոլորովին նոր բովանդակություն ունեցող աշխատուժի ֆունկցիոնալ դերը։

Կ. Մարքսի վերոհիշյալ դրույթի տեսակետից դիտելով հասարակական սպառման ֆոնդերի՝ որպես անհրաժեշտ արդյունքի բաղադրամասի ֆունկցիոնալ դերը և նկատի ունենալով այն, որ սոցիալիզմի օրոք հասարակական արտադրության մեջ աշխատուժի կատարած դերով կարելի է որոշել նշված ծախսերի՝ որպես անհրաժեշտ արդյունքի բաղադրամասի, օգնությամբ լուծվող բազմաթիվ խնդիրները, կարելի է եզրակացնել.

Առաջին, հասարակական արտադրության (վերարտադրության) պրոցեսում այդ ֆոնդերը հանդես են գալիս որպես վերարտադրության միջոց, որոնք որպես որոշակի հարաբերություն կապվում են արտադրության օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերի, արտադրական հարաբերությունների ամբողջ սիստեմի հետ։ Իսկ իբրև դրանց միջոցով լուծվող տնտեսական խնդիր և ստացվող արդյունք՝ հանդես է գալիս նաև հասարակական ամբողջական արդյունքը։

Երկրորդ, ինչպես հասարակական սպառման ֆոնդերի, այնպես էլ աշխատավարձի ֆունկցիոնալ դերը սոցիալիզմի պայմաններում ամենաընդհանուր ձևով հանգում է սոցիալիստական արտադրության (վերարտադրության) ամբողջական պրոցեսի՝ արտադրության, բաշխման, փոխանակության, սպառման զարգացմանն ու կատարելագործմանը և այդ հարաբերություններն ընդգրկող բոլոր կողմերի, աշխատուժի (բնակչության) և հասարակական ամբողջական արդյունքի վերարտադրության իրականացմանը։

Մեր համոզմամբ, նշված ֆոնդերի (հետևաբար անհրաժեշտ արդյունքի) ֆունկցիոնալ դերի ու դրանց արտադրության (վերարտադրության) հետ կապի նման մեկնաբանումը փաստորեն լրացնում է այդ մասին եղած տեսակետները և համապատասխանում է տնտեսական երևույթների ու կատեգո-

36 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 219—220։

րիաների ուսումնասիրման մասին ՍՄԿԿ XXV համագումարի կողմից հասարակական գիտություններին ներկայացված կոնկրետ պահանջին. «հետազոտել զարգացած սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները. նրա՝ կոմունիզմի վերաճելու օրինաչափությունները, դրանց գործողության մեխանիզմը»[37]։

ФУНКЦИОНАЛЬНАЯ РОЛЬ ОБЩЕСТВЕННЫХ ФОНДОВ ПОТРЕБЛЕНИЯ И ИХ СВЯЗЬ С ПРОИЗВОДСТВОМ

РАЗМИК ГЕВОРГЯН

Резюме

Исследования расходов на просвещение Арм. ССР (как составной части необходимого продукта) подтверждают, что данные расходы способствуют развитию личных и вещественных факторов производства, увеличению валовой общественной продукции и национального дохода, являясь его составной частью.

В процессе общественного производства (воспроизводства) общественные фонды потребления выступают как средство производства и связываются с процессом социалистического производства.

В самом общем виде функциональная роль общественных фондов потребления (в том числе зарплаты, выступающей по своему содержанию как необходимый продукт) состоит в обеспечении воспроизводства рабочей силы (населения), валового общественного продукта и социалистических производственных отношений.

---

37 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 316։